ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/04

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միհր Անանյանի

Մասնակցությամբ «Լարգո Վինչ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Դ. Աբրահամյանի (լիազորագիր տրված՝ 17.01.2019թ.)

ՈՒսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.01.2019թ. թիվ 26-3/198-19 գրությամբ «Լարգո Վինչ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հրազդանի համայնքապետարանի 27.12.2018թ. թիվ 1424 գրության հիման վրա, 11.01.2019թ. թիվ 26-3/198-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Լարգո Վինչ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Լարգո Վինչ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Լարգո Վինչ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Լարգո Վինչ» ՍՊԸ-ի 14.12.2018թ. գնման մրցույթին մասնակցելու օրվա դրությամբ առկա հարկային պարտավորությունը հետևանք է տեխնիկական վրիպակի: 13.11.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացված 2018թ. հոկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում ՀՀ տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկայի հաշիվները չեն վավերացվել մինչև ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկիների կայացման համար ՀՕ-ի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը (հաջորդ ամսվա 20-ը) ներառյալ, սակայն համաձայն՝ վերը նշված ստացված հարկային հաշիվների մինչև 20.11.2018թ. կատարվել է համապատասխան ապրանքների և ծառայությունների դիմաց բացառապես բոլոր կրեդիտորական պարտքերի մարում (հատկապես «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից հոկտեմբեր ամսվա ընթացքում մատակարարած բնական գազի դիմաց»): Կազմակերպությունը չի թաքցրել իրացման շրջանառությունը, որն ակներև է նաև 2018թ. հոկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում, կատարվել է հարկային պարտավորությունների մարում ամբողջությամբ: 28.11.2018թ դրությամբ Ընկերության հարկային պարտավորությունը կազմել է 27 631 ՀՀ դրամ, որը սակայն ոչ թե Ընկերության հարկերն ուշ վճարելու արդյունք է եղել, այլ «Հայէկոնոմ բանկ» ԲԲԸ Հրազդան մասնաճյուղում 20.09.2018թ ժամը 14:08-ին հարկային պարտավորության մարման նպատակով փոխանցված գումարը Կենտրոնական գանձապետարանի հաշվին մուտք է եղել 24.09.2018թ.: Համաձայն՝ 29.11. 2018թ. ՀՀ ՊԵԿ թիվ 1743/2018/Ծ-Վ3 էլեկտրոնային ծանուցում չի կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2016թ. դեկտեմբերի 30-ի թիվ 298-Ն հրամանի 1-ին հավելվածի 22-րդ կետի պահանջները, հետևաբար 2018թ. հոկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում հաշվանցված ԱԱՀ գումարները ճանաչվել են անվավեր: 29.11.2018թ. էլեկտրոնային եղանակավ ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացվել 2018թ. հոկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի ճշտված միասնական

հաշվարկ, որի արդյունքում առաջացել է հարկային պարտավորություն, որն ակնհայտ իրացման շրջանառության կամ ծավալների պակաս ցույց տալու կամ թաքցնելու արդյունք չէ, սակայն ինչի հետևանքով պակաս չի վճարվել պետական բյուջե վճարվելիք հարկերը:

2018թ. հոկտեմբեր ամսվա ՀՀ տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվները վավերացվել են 29.11.2018թ-ին: 11.12.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացվել 2018թ. նոյեմբեր ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի ճշտված միասնական հաշվարկ, որի 20-րդ կետում ճշգրտվել և ավելացվել է վերոնշյալ անվավեր ճանաչված ԱԱՀ-ի գումարը համաձայն՝ ՀՀ հարկային օրենքի 71-րդ հոդվածի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2016թ. դեկտեմբերի 30-ի թիվ 298-Ն հրամանի 1-ին հավելվածի 24-րդ կետի: Ըստ ՀՀ հարկային օրենքի 78-րդ և 99-րդ հոդվածների հաշվետու ժամանակաշրջանում առաջացած պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:

Արդյունքում 14.12.2018թ. գնման մրցույթին մասնակցելու ամսվա դրությամբ արտացոլվել է հարկային պարտավորություն: 24.12.2018թ. համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկանքի, Ընկերությունը հարկային պարտավորություն չի ունեցել»:

Ամփոփելով վերը նշվածը, Ընկերությունը հայտնել է, որ 18.01.2018թ. «Լարգո Վինչ» ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովին գրավոր կարգով ներկայացրել է վարչական բողոք, որով խնդրել է Ընկերության վերը նշված հարկային պարտավորությունները, հաշվարկված տույժերը համարել անհիմն, ինչպես նաև գնահատել հարկային վարքագիծը:

«Լարգո Վինչ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 17.01.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը, միաժամանակ Ընկերությունը միջնորդել է հետաձգել նիստը և տրամադրել

ողջամիտ ժամկետ՝ վերը նշված խնդրի կարգավորման նպատակով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկայի և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովին դիմելու համար:

Գնումների հետ կապված բողոքողներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ Ընկերության կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկայի և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել:

3. Հրազդանի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստերը.

Հրազդանի համայնքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.12.2018թ. թիվ 1424 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի «Հրազդանքաղլուսյ» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ՀՔԼ-ԳՀԱՊՁԲ-02/19» ծածկագրով սեղմված բնական գազ ձեռք բերելու նպատակով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Լարգո Վինչ» ՍՊԸ-ն, սակայան ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 1 396 728 ՀՀ դրամի չափով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 17.01.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2019/04 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2019/04 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.Հրազդանի համայնքապետարանի կողմից Հրազդան համայնքի «Հրազդանքաղլոյս» ՊՈԱԿ-ի կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքերման նպատակով կազմակերպվել է «ՀՔԼ-ԳՀԱՊՁԲ-02/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***14.12.2018թ.*** հայտ է ներկայացրել «Լարգո Վինչ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 02 արձանագրության 3.1-րդ կետով կայացված որոշմամբ «Լարգո Վինչ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 21.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Լարգո Վինչ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1 396 728 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.12.2018թ. նիստի թիվ 03 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Լարգո Վինչ» ՍՊԸ-ի հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.01.2019թ. թիվ 26-3/198-19 գրությունը, Հրազդանի համայնքապետարանի 27.12.2018թ. թիվ 1424 գրությունը և կից փաստաթղթերը, «Լարգո Վինչ» ՍՊԸ-ի կողմից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ

ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու*** և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին ***հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող*** կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ***ապա այդ հանգամանքը***

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Այսպիսով, Հրազդանի համայնքապետարանի կողմից Հրազդան համայնքի «Հրազդանքաղլուս» ՊՈԱԿ-ի կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքերման նպատակով կազմակերպվել է «ՀՔԼ-ԳՀԱՊՁԲ-02/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***14.12.2018թ.*** հայտ է ներկայացրել «Լարգո Վինչ» ՍՊԸ-ն:

«Լարգո Վինչ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 02 արձանագրության 3.1-րդ կետով կայացված որոշմամբ «Լարգո Վինչ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Լարգո Վինչ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 21.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Լարգո Վինչ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1 396 728 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.12.2018թ. նիստի թիվ 03 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Լարգո Վինչ» ՍՊԸ-ի հայտը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ*** հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ***ունեն*** իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան ***հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Միաժամանակ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող*** կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Ելնելով վերոգրյալից, գտնում եմ, որ «Լարգո Վինչ» ՍՊԸ-ի կողմից հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասով, հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 1 396 728 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.01.2019թ. թիվ 26-3/198-19 գրությամբ «Լարգո Վինչ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Լարգո Վինչ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**